



Տարեկան գինը 10 բուրձի կէտ տարւում 6 բուրձի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատուն մէջ.
Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мешак».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ման լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խմբագրչիւր առաւօտեան 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՌՆԻ

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց.
Մատենագրութիւն. Վրաց թատրոն. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒԻՐ. Մանրանկար.—
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Նամակ Գերմանիայից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Տարին վերջանալու վրա է. Գրականաւոր-
կան հրապարակում սկսվել է օրացոյցների աւ-
գոստ. Դա, եթէ կարելի է այսպէս անուանել,
օրացոյցային գրականութեան փառաւոր քե-
նէֆիւն է.

Միծաղի այս անուան վրա—օրացոյցային
գրականութիւն. Օրացոյցը այնպիսի մի բան
չէ, որ հարկաւոր համարվէր նրա մասին խո-
սել. կազմում են օրացոյցներ՝ հարուստ կամ
անհարուստ յաւելումներով, խոշոր տառերով
յայտարարում են, ծախում են. Ահա օրացոյցի
կենտրոնը. Դրանից աւելի ուշադրութեան նա
արժանի էլ չէ. Այսպէս է սովորութիւնը.

Բայց եւ համաձայն չեմ, որ այսպէս լինի.
Զը կայ մեզանում մի ուրիշ գիրք, որ օրա-
ցոյցի չափ տարածվի. Իւրաքանչիւր տարի
տասնեակ հազարներով ցրվում են այդ փոքրիկ
գրքիկները մեր ժողովրդի մէջ, սովորաբար
միջին եւ ստորին դասերում. Մի ամբողջ տա-
րի, 365 օրերի ընթացքում, այդ գիրքն է ժո-
ղովրդի մարդու ձեռքում, նա է դեկամպոսում,
նա է ցուցմունքներ տալիս. նա ընկեր է, նը-
րան հարցեր են տալիս եւ պատասխաններ
տալիս.

Հէնց այս հանգամանքը բաւական է, որ մի-
մի անգամ այս գրականութեան վրա էլ ու-
շադրութիւն դարձնող լինի. Դուք չէ՞ք կարող
տեսնել, թէ զա մտաւոր անունը չէ. Ապա ու-
րեմի, պէտք է տեսնել թէ ինչ անակ անունը
է դա.

Իմ առջեւ դրված են 1902 թւականի օրա-
ցոյցներէն մի քանի հատ. Թերթիկով գրանց,
եւ ազգայնական եմ. Վտաւոր անունը չէ սա,
այլ թոյն. Սարգսիւնի հանգամանք. Տա-
նեակ հազարներով գրքիկներ, որոնք ամեն
աւրի եւսեղանով տարածվում են այդ թոյնը,
չորում են ժողովրդի անպաշտօնութիւնները
փող եւ միայն փող կորզելու համար.

Սարգսիւնի չէ.

Մեր գաւառական խուլ, յեւ ընկած անկիւն-
ներում դուք այժմ էլ կարող էք պատահել ժո-

ղովրդի արիւնք ծծող վաճառականների մի տե-
սակերն. Դրանք «գրքացներ», «փախչիներ»,
«կուռ չարիքներ», «գարի գցողներ» են. Ու-
րիշ չափ անուններ էլ ունեն այդ աղբուկնե-
րը. բայց այդ բոլոր անունները մի եւ նոյն
բանն են ցոյց տալիս—հարստահարել ժողո-
վուրդը, շահագործելով նրա ազիտութիւնը, նրա
անպաշտութիւնները, նրա հաւատը.

Սովորաբար այդ վաճառականները աղէտ, զգաղ-
ված մութ անձնաւորութիւններ են, որ եւ է
բխտիւր տիրացու կամ տէրաւոր, որ եւ է բո-
չա, որ եւ է ճարպիկ խաբէրայ. Նրանք գոր-
ծում են սուս ու փուս, խնամքով վարագոր-
ված գաւառական թանձր մութի մէջ, զգու-
շութեամբ. Խաբում են, բայց այդ խաբեա-
յութիւնը կատարում են այնպէս, որ ոչ ոք
չիմանայ.

Խեղճ գրքացներ. Նրանք, երեւի, չը գիտեն,
որ ունեն այնպիսի արհեստակցներ, որոնք ոչ
անմաշկում են, ոչ քայվում, որոնք փող են զըլ-
լում ոչ թէ պատահական զոհերից, ծածուկ ան-
կիւններում, այլ հրապարակով, օրը կէսօրին,
հարկաւոր ու հազարաւոր մարդկանցից.

Եւ այդ համարձակ գրքացները մեզ համար
օրացոյց. կազմողներն են, ընթերցողը. Դուք
չէ՞ք գտնի գրանց մէջ մի հատը, որ մեզ խաբե-
լու, մեր գիրքահաւատութիւնը չափազանցելու
գիտաւորութիւնը չունենայ.

Վերցրէ՛ք ամենից առաջ էլմիածնի վարդա-
պաններին. «Խաչը իմա է, գործութիւնը եւ եմ
իմանում»,—ասում է ժողովրդական առածը.
Էլմիածնի մասին մեր է, եւ մենք լաւ գիտենք, թէ
այնտեղ ինչ են իմանում եւ ինչ չեն իմանում.
Գիտենք մանաւանդ այն, որ էլմիածնում չեն
իմանում այն, ինչ իսկապէս հարկաւոր է ժո-
ղովրդին. Բայց անհէ՛ք. էլմիածնում նստած
վարդապետները մի տարի առաջ գուշակում են,
թէ ինչ եղանակ պիտի լինի էլմիածնի օրա-
ցոյցը թոյլատրված է տպագրելու 1901 թւա-
կանի փետրվարի 13-ին. բաց արե՛ք 1902
թւականի փետրվարի 10-ը եւ դուք կը
կարդաք. «Ծրարաւոր է հոգեւորը». Այդ դու-
շակութիւնը մի տարուց յետոյ պիտի կա-
տարվի. Բայց էլմիածնի վարդապետները
աւելի մեծ հրաշք էլ կարող են ցոյց տալ.
Դրանք գուշակում են եւ այն, ինչ պէտք
է կատարվի տարի ու կէսից, մօտ երկու տա-
րուց յետոյ. եւ գրում են 1902 թ. օգոստոսի
համար, «Հնդկի, անհրեւ.». Փոփոխական.
«Բարեխառն». Իսկ դեկտեմբերին, այսինքն մօտ
երկու տարուց յետոյ, եւ գիտեն, որ պիտի լինի
«Մերթ ձիւն, մերթ անձրեւ» կամ «Զիւնաբեր
հոգով»...

Ինչ է սա. եթէ գիտութիւն է, չենք հա-
կանում, թէ ինչպէս է, որ ամբողջ աշխարհը
չէ հիմնում էլմիածնի գիտականների վրա.
Զէ՛ որ այդ գուշակութիւնները չեն աղովում
հարկաւոր գիտանողներին, հարկաւոր
գիտականներին. Զի՛չք է, այս գիտական
հաստատութիւնները բազմակողմանի ուսում-
նասիրութիւնների եւ գննութիւնների միջո-
ցով կարողանում են առել, թէ մտաւորապէս
ինչ անակ եղանակի կարելի է օգտակ մի
կամ մի քանի շրից յետոյ, եւ այդ եզրակա-
ցութիւնները միշտ եւ ամեն ժամանակ ա-
նուանում են «հասկանալի». Բայց ինչ նմա-
նութիւն այդ վախճան, ոչինչ չը հասկացող
գիտականների եւ էլմիածնի վարդապետների
մէջ. էլմիածնում հայ վարդապետը առանց
գործիքների, առանց գիտաբանութիւնների ու
հաշիւների, մատը դնում է ճակատին եւ ա-
սում է, որ տարի ու կէսից կամ երկու տա-
րուց յետոյ այս ինչ օրը ձիւն պիտի գայ. Ինչ-
պէս է, կրկնում եմ, որ Եւրոպայի չէ հասկա-
նում թէ էլմիածնից պէտք է իմանալ գաղա-
նիքը. Ինչպէս մեր այս հեշտ գիւտը չէ ընդհա-
նում, աշխարհի մէջ մեր փառքը տարածում.
Իմ խեղճ, միտմեք ընթերցող. ոչ մի գիւտ
չը կայ այդտեղ. ոչ մի ճշմարտութիւն չը կայ
այդ գուշակութիւնների մէջ. Մեղանից պէտք
է 20 կոպէկ անել—եւ ահա այս պատճառով
են մեզ խաբում.

Սա դեռ 20 կոպէկի գործ է. Ահա մի ուրի-
շը, մի տէրաւոր, կանգնում է մեր առաջ եւ
ասում է.

—Երեք շահի տուր.
Էփան է. Դուք տալիս էք. Եւ երեք շահով
դուք ամբողջ տարի կարող էք իմանալ ձեզ
յուզող երազների մեկնութիւնները.

Աւարածն ի դէմք ելանէ՛ ահ հասանի քեզ ի
մեծ մարդու.
«Բող կնոջ խօսքին» փառք է.
«Միծաղիլն արտաւորութիւն է.
«Միտար եւ սոխ եւ տպոյն կսկիծ եւ.
«Փոխիւն ուտեն զէն է.

Զը կարծէք, խնդրեմ, թէ եւ բոլոր գուշա-
կութիւններն արտաւորեցի. Ոչ եւ հազար ան-
գամ ոչ. Տէրաւոր երեք շահով ծախած երա-
զանքը շատ հարուստ է, շատ բազմակողմա-
նի ու մեծ է. Ամեն ինչ կայ նրա մէջ, եւ ձեզ
միտ է միայն ամեն գիշեր քնել, երազ տես-
նել. Մնացածը հեղացված է. Առաւօտեան եւ
երեք շահանց ձեր բարեկամը կը բացատրէ
ձեզ ամեն ինչ, ցոյց կը տալ ձեր ամբողջ ճա-
կատագիրը.

Իսկ թէ սուտ չէ ձեր երեք շահանց բա-

րեկամը, այդ մասին ոչինչ կտակած ունենալ
չէք կարող. Նայե՛ք. Կազմի վրա տպված է
«Գիւտ աւագ քահանայ Աղանեսնց».
Սա այն քահանայն է, որի գրական գործու-
նէութեան չը գիտեմ քանիքորդամեակի
յօրելեանը տօնվեց նորերու մաս. Ուղերձներ, գո-
վաւանքներ մատուցվեցին, աղբը մի կլորիկ
գուշար. պարզեւեց յօրելեանին՝ գրական գոր-
ծունէութիւնը շարունակելու համար. Այդ
գործունէութեան աչքի ընկնող կողմերից մէկն
էլ, անկասկած, հարուստ եւ գեղեցիկ երազա-
հանն է.

«Չաման կոխ է».
Հաւատացէ՛ք, որ անպատճառ այդպէս է, որ
եթէ չաման տեսնէք, կոխ է լինելու.

Հաւատացէ՛ք. Եւ համոզվեցէ՛ք, որ 15 կոպէկ
թանգ չէ այդպիսի օգնչիլի գուշակութեան
համար.

Երեւանները իրանց կարգով. Վտա չէ եւ
երեք շահին հաւաքել. Դուք աղէտ էք, հա-
ւատում էք, ուրեմն երեք շահին տուէք.

Երազ գուշակող տէրերը տալիս է իր գիւ-
տերը առանց որ եւ է բացատրութեան. Դոնէ
նա օրինակ վերցնէր Մակար Չաչկեանից.

Ահա Մակար Չաչկեան էլ գիտեղել է իր
օրացոյցում նոյն երազանքը. Մակար Չաչկեան
ժողովրդի համար աւելի օրացուաւ բարեկամ
է. նա գիտէ, որ գրաւոր չէ հասկանում ժո-
ղովուրդը եւ թարգմանել է երազանքը աշ-
խարհաբար. Այնպէս որ այնտեղ, ուր Գիւտ
քահանայն ասում է «Աղջիկ իւր ծոցն» խնդու-
թիւն է, աղջի՛կ փոքր՝ շահ է եւ լարի, այն-
տեղ Մակար Չաչկեանը գրում է. «Աղջիկ—իւր
ծոցում աղջիկ տեսնելը՝ խնդութիւն է. Փոքր
աղջիկ տեսնելը շատ օգուտ է».

Բայց միայն այս չէ պ. Չաչկեանի երազա-
հանական առանձին ծառայութիւնը. նա գրել
է եւ այդ մեծ ծառայութեան նախաբանը.
Ինքնուրոյն հեղինակութիւն է դա, շատ զար-
մանալի, շատ գիտական եւ շատ գրքացական.
Դէս ու դէն է ընկնում խեղճ Չաչկեանը, կամ
ասում է թէ երազը երազ է կամ թէ երազը
երազ չէ, այլ մարդաբանութիւն, բայց վերջ ի
վերջոյ գալիս է, էլի դնում երազանքը, որ,
պարզի շատ հեղինակաւոր վկայութեան նայ-
ած, կազմել է Դանիէլ մարգարէն. Եւ չեմ
կարող զրկել ձեզ, ընթերցող, մի մեծ հաճու-
թիւնից եւ կարողագրեմ Մակար Չաչկեանի
անմահ, հրաշալի վերջաբանը.

«Թէ եւ մենք,—ասում է նա—համարիւմ չենք
հետեւեալ երեսներում գետեղուած երազների
առանց գիտական հաստատ բացատրութեանը,
բայց օրպէս—գրաւոր ժողովրդի գործածու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Լ է, պիցի գ. գեկեմբերի 5-ին

Միթթարեանների վանք ւ. Ղազար կղզում,
Վենետիկ մօտ. Այս վերնագիրը ունի «Ueber
Land und Meer» պատկերազարդ շաքաթաթե-
թում վերջերս հրատարակված մի ընդարձակ
յօդուած, «L. Holthof» օտարագրութեամբ.

Յօդուածի սկզբից մինչեւ վերջը մէջ ընդ մէջ
նկարված են հետեւեալ պատկերները. Միւ-
թար արքայալը, ներկա արքայալը զգե-
տաւորված, պատարագի ժամանակ, չորս տա-
րկաւոր զգետաւորված, բուրվաւորներ ձեռք-
ներին, վանքի արտաքին տեսքը ծովի կող-
մից, եկեղեցու ներսը, նրա խաչածեւ մուտքը.
Յօդուածագիրը, ինչպէս գրվածքից պարզ ե-
րեւում է, բաւական լաւ ծանօթ է մեր մօտիկ
անչափին. Սրանից երկու զար առաջ մեր հա-
սարակական կենտրոն խաբուով վիճակը, կրօ-
նական պաշտօնականներ, հայի մտաւոր ան-
կեալ գրութիւնը նա բաւական մանրամասն-
րէն եւ ճիշտ գծերով առաջ է բերում. Իսկ
ընդհանուր առմամբ, երբ նա սկսում է Միւ-
թար Սերաստացու կենսագրութիւնը համա-

ռօտ ուրուագծել, Միթթարեան միաբանական
կազմակերպութեան հաստատութիւնը եւ մեր
պատկանչի հայրերի գործունէութիւնը պատ-
մել, այն ժամանակ ընթերցողին թւում է, թէ
հեղինակը մի ազգագէտ հայ է եւ ուղեցել է
օտար մասուրի մէջ ըստ արժանւոյն եւ գուցէ
աւելի զբաւեցել իր ազգակիցների գործն ու
վաստակը.

Այն, յարգելի հեղինակը մօտ ծանօթ լինելով
Միթթարեանների ոչ միայն բնիմաւոր գոր-
ծունէութեան, այլ եւ կենտրին, նիւտ ու կա-
ցին՝ խիտ գեղեցիկ գոյնեղով, հիացմունքով
լի ոճով զարդարում է իր յօդուածը. Աւելորդ
չենք համարում այստեղ մի քանի հետաքրքիր
նմուշներ բերել նրա գրվածքից.

«Վենետիկի խիտ մօտ հետաւորութեան վրա
գտնվող ւ. Ղազար հրաշագեղ կղզին, բացի իր
բոլոր զիւթից գեղեցիկութիւններից, որոնք
անշուշտ երկրորդական տեղ են բռնում, նուր-
բազարված է մի խորհրդաւոր եւ իմաստալից
հաստատութեամբ. Այդտեղ ամբողջված է մի
գիտութեան տաճար, որ իր ճառագայթաձեւ
չօղերը արձակելով դէպի Վենետիկ քաղաքը,
միանում է տեղական լոյսի հետ եւ մի բոցա-
վառ պատկեր ստանում. Այդ գիտական ա-
կադեմիայում կենտրոնացած են աշխարհային
վայելքներից հեռացած մի խումբ անձնանուէր,
բարեպաշտ եւ գիտական վարդապետներ.

Դրանք ազգով, կամ աւելի ճիշտ, իրանց ամ-
բողջ էութեամբ հայեր են. Նորբա ամբողջ
հայ ազգը մեծ ցնծութեամբ տօնեց այդ միա-
բանական կազմակերպութեան 200-ամեայ յօ-
բելանքը.

Յօդուածագիրը մի համառոտ ակնարկ ձգե-
լով Միթթարի օտար եկեղեցու գիւղի մասնաւոր
խիտ բնական է գտնում այդ քաղաքի ազգային
վիտերով համակուած մի վառվառ երիտա-
ւորի համար, որի ընդարձակ ծրագրի ներքի ի-
րադրածան համար անհրաժեշտ էր հանգիստ
վայր եւ անտեսական կենտրոն ապահովութիւն.
Իսկ զրա համար նա ուրիշ ոչինչ չէ անում,
բայց եթէ ընդունում է պապի հոգեւոր գե-
րիշխանութիւնը. Միթթէ հայ ազգը—գրում է
նա—կունենար այսօր եւրօպական նշանաւոր
կենտրոններում, ինչպէս են Վենետիկ եւ Վիեն-
նա, այնպիսի գիտական կենտրոն հաս-
տատութիւններ, եթէ այդ անպառ օյժերով
գործող հայ վարդապետները կաթօրիկ չը լի-
նէին.—անտարակոյս, այժմ միթթէ կրթ. ան-
հատի կամ հաստատութեան համար մի օր եւ
է ազգի պատկանելու գրաւականը աւելի է,
քան նրա ծագումը, լեզուն, գործունէութիւն-
ը եւ այն բոլոր մտաւոր շահերը, որոնք հա-
սարակական ընթացիկ կենտրոն տեղի են
ունենում. Իսկ Միթթարեանների վերաբեր-

մամբ այս փաստերը կատարեալ են եւ պեր-
ճախեալ.

Գերմանացի հեղինակը բաւական երկար
կանգ է առնում Միթթարեան հայրերի գրա-
կան գործունէութեան վրա. Միթթարեանների
մատուցած ամբողջ ծառայութիւնը նա բաժա-
նում է երկու մասի—հին եւ նոր. Գիտութեան
շատ ճիշդը են իրանց ճշմարիտ ծառայումը
ստացել այդ նուիրական հաստատութեան մէջ.
Սակայն մասնաւորապէս Միթթարեան հայ
վարդապետները իրանց նուիրել են ազգային
գրականութեան, լեզուին եւ հնագիտութեան.
Նրանք հայ վիճերի՛կ. բայց ոչ պակաս հարը-
տութիւն ունեցող ազգի՛ մթնոլորտում մէջ թա-
ղուած անցեալը լոյս աշխարհ հանեցին այն
բեղուն գործունէութեամբ, որ տարիներ շա-
րունակ գործ են դրել հայ ձեռագիր յիշատա-
կարանների եւ սեպաձեւ արձանագրութիւն-
ների վրա. հին մտաւոր աշխարհի այն թան-
գազին փշրանքների, որոնցից նրանք ունեն
իրանց արձանագրութեան տակ մի վիթխարի
քանակութիւն—2000 հատ. Նրանք հայոց հին՝
կաթիկ լեզուն, իրեւ մէկը այն լեզուներից,
որոնք թարմ ազգերի մտքի յեղաշրջումով
գործնական կենտրոն մտքերն իրաւուն-
քից իօպառ գրվել էին, ծաղկեցրին, արուես-
տական չափ ու օրէնքի տակ դրին եւ բանա-
տեղծական թովչութիւն ու ներդաշնակութիւն

Մեզ խնդրում են բարեգործ անձանց ու-
չադրութիւնը հրաւիրել թիֆլիսի քաղաքացի
Ստեփան Բէկազանցի ընտանիքի վրա, որ
բաղկացած է աշխատանքի անընդունակ հօրից
և 4 փոքրահասակ երեխաներից եւ որ բոլոր-
ովին զուրկ է գոյութիւն պահպանելու մի-
ջոցներից: Կարելի է օգնել չորերով, կերակուր
ուղարկելով եւ դրամով: Հասցէն.—Տ-րդ քա-
ղաքապետն, Սուրբ-Սարգսի փողոց, տուն Գրի-
գոր Խարազովի, № 41:

Այսօր, դեկտեմբերի 2-ին, Աւստրիական ժողո-
վրդական թաղամասում կը արվի հայկական վեց-
երորդ ներկայացուցիչ.—Խաղաղութիւն են էմ. Տէր
Գրիգորեանի «Դաժնակեան տուր» դրաման:

«Ճնորհիւ Փոքրեկի» լրագիրը հաղորդում է,
թէ Կոնգրեսի լիք աւագ-քահանայի նախագա-
նութեամբ կազմված է մի մասնագիտով, որին
յանձնված է վերաբնակել եւ ուղղել վրացերէն
աստուածաշունչը: Մասնագիտովը աշխատանքի
աւարտմանից յետոյ՝ մտադրութիւն կայ ձեռ-
նամուկ լինել աստուածաշունչի նոր հրատարա-
կութեան: Մասնագիտովի անդամներ ընտրված
են պ. Կիւրչիձէ, Յինգաձէ եւ Յիւլիսաձէ քա-
նահանները, Պատրիարքի լիք եւ ուրիշները:

Նոյն լրագրին գրում են Բաթումից, թէ
այնտեղ կազմվել է խոհարարների եւ լսկէյ-
ների ընկերութիւն, որ մտադիր է բանալ սե-
փական բերք եւ տեղեր գտնել ընկերութեան
անդամների համար:

ՅԱՐԻՑԻՆԻՑ Ժողովը գրում են. «Նոյեմբերի
25-ին հայոց աղօթք աստուր խումբ բազմութեան
ներկայութեամբ կատարվեց հանդիսաւոր պա-
տարագ. երգում էր սիրողների միաձայն խումբ-
ը, զեկեմութեամբ Անպատկաններ: Պա-
տարագից յետոյ կատարվեց հայր Դ. Արիւնի
հոգեհանգիստը: Պատարագից քահանան խոսեց
մի աղօթք դաժնակեան, բացատրելով բազմա-
վասակ եւ արիւնքան Նահապետի տուած օ-
գուտը աղօթին եւ նրա գրականութեանը:

ԱՐՄԱԻՐԻՑԻՑ Ժողովը գրում են. «Հ. Դ. Արիւնի
մահը խոր տպաւորութիւն թողեց մեզ վրա:
Մի քանի երիտասարդներ ուղեցին հոգեհան-
գիստ կատարել, սակայն տեղին չէր ընդհալսու-
քահանաները մերժեցին, պատճառաբանելով թէ
հ. Արիւնի Հայաստանեայց եկեղեցու գաւակ
չէ: Այնու ամենայնիւ հետագայով զիմեցին թե-
մական առաջնորդին՝ թոյլաւորութիւն խնդրելով
Դժբախտաբար պատահաւոր չը լինելու պատ-
ճառով, եւ խորհուրդով «Մշակ» № 255
յօդուածից, գիմեցին անմասն հայոց հաթա-
ղիկներն են ասացան հետեւեալ պատասխանը.
Նորին Վեհափառութիւնը հրամայեց զիմել
թեմական առաջնորդին եւ հ. Արիւնի հոգե-
հանգիստի թոյլաւորութիւնը խնդրել նրանից: Կո-
րին վարդապետ: Շատ ցաւալի կը լինի, եթէ
մեր հոգեւորականները սկսեն վերադառնալ դէ-
պի միջին դարերը: Թող մեր բազմաթիւ լու-
սաւորական հոգեւորականները աղօթեն, որ
իրանց միջից դուրս գայ մի Արիւն, որպէս զի
մենք առանց ուշադրութեան թողնենք կաթո-
լիկ Արիւններին:

ԱՐՄԱԻՐԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՄԱԻՐԻՑ ԼՈՒԻՐԻ

—«Tempa» լրագիրը հաղորդում է, թէ անգ-
լիական ցինցուրայի խումբի մասնաճիւղը,
խմբագրութիւնը վեց ամսից աւելի է, որ
թղթակցութիւններ չէր ստանում Բոհանէս-
տուրքի իր թղթակցից: Վերջապէս «Tempa»
մօտ օրերումս հարաւային Աֆրիկայից եկած
մի ճանապարհորդի ձեռքով, ստացաւ մի թղթ-
թղթակցութիւն, որի մէջ խիստ հետաքրքրական
տեղեկութիւններ կան քահանայութեան պատե-
րազմի այժմեան վիճակի մասին: Համաձայն
այդ տեղեկութիւնների՝ գնեցաւ Բոսա յայտ-
նել է, թէ պատերազմը կը տեւէ էլի ոչ պա-
կաս, քան հինգ տարի: Բոհանէս գնեցաւ
համազմած է, որ անգլիացիները վերջ ի վեր-
ջոյ, տարված կը լինեն հեռանալ ոչ միայն
Տրանսվալից եւ Օրանժեան հանրապետու-
թիւնից, այլ նաեւ Կապի գաղթականութիւնից:
Սպանիական 28-ին Բոսա հաշից այն բոլոր
կրօնականները, որ բռնեցին անցնել են պա-
տերազմի սկզբից մինչեւ այդ օրը: Դուրս ե-
կաւ, որ այդ ժամանակվայից ստանալով
զայտուած սպանվել կամ վերքերից մեռել են
ընդամենը 8,800 բռնեցի: Պետերսբուրգում առ-
այժմ խաղաղութիւն է տիրում, բայց նրան
միտադու խաղաղ պահելու համար հարկաւոր
է 700 մարդուց բաղկացած մի ստուար ու-
սիկանական խումբ, որ աշխարհը կերպով հսկէ
եւ ճնշէ ապստամբութեան փորձերը: Բայց ար-

քան էլ հակոգութիւնը զգուշաւոր լինի, թղթ-
թակցի կարծիքով, կասկած չը կայ, որ վաղ
թէ ուշ ապստամբութիւն պէտք է ծագի
Տրանսվալի մայրաքաղաքում: Անգլիական
փոքրութիւն պահակախմբերը իւրաքանչիւր օր
ենթարկվում են բռնեցիների յարձակումներին:
Հոկտեմբերի 3-ին բռնեցիներ այցելեցին Բոհանէս
պահեստը: Անգլիական զինուորների թիւը,
որոնք կատարեալ անգործութեան են մատնե-
ված Պրետորիայում, հասնում է 2,500: Սպա-
սում են, որ կարճ ժամանակից յետոյ բռնե-
ցիները կապստամբեն Բոհանէսում:

—Նոյն-Սաղում հրատարակվող «ՅԱՅԵԱՅ»
լրագիրը «Բալկանեան հարցը» վերնագրով մի
առաջնորդող յօդուածում ասում է, թէ իրերի
գրութիւնը Բալկանեան թերակղզում այնպիսի
ուսուր կերպարան է ստացել, որ հազիւ թէ
ուսուսաւորական համաձայնութիւնը խաղա-
կութիւն եւ կարգ պահպանելու մասին Բալ-
կանեան պետութիւնների մէջ՝ կարողանալ աւելի
երկար ժամանակ պահպանել այդ խաղաղու-
թիւնը: «Թերթերայի» մէջ.—գրում է լրագիրը.—
երկրորդ թիւը բերեց անհայտն են շատ
մտանգաւոր ազդեցութեան են անում. հայկական
հարցը նորից բռնկել է: Հին-Սերբիայում գրու-
թիւնն այնքան վատ է, որ այդպէս երկար չա-
րունակվել չէ կարող: Այսպիսի յօդուած-
ները երբեք այնպիսի մեծ չափեր չեն ընդուն-
նել, ինչպէս այժմ: Բոհանէսում եւ Հերցեգովի-
նայում հայաբնակները սերբերի դէմ այնպէս
ստատկանել են, որ անկարելի է կարծել, թէ այս
ամենը կատարվում է առանց դիտաւորեալ նպա-
տակի: Ամբողջ աշխարհը սպասում է, որ Մա-
կեդոնիայում թէֆօրմներ կը մտցնվեն: Բոլաշ-
իայում իրերի գրութիւնը հասել է այն առ-
տինակին, որ սկսել են խոսել իրանի Ֆէրդի-
նանդի հրաժարման մասին գաղտնի: Կրէտի
միասնը Յունաստանին ամենամօտ ժամանակի
հարց է... Այն գրութիւնը, որ ամբողջ Բերլինի
կոնգրէսը Բալկանեան թերակղզու համար, ժա-
մանակաւոր եւ անցողական է. նա ոչ թե՛ գա-
նութիւն չը պատճառեց: Լրագիրը գուշակում
է, որ եթէ գործերը Բալկանում շարունակեն
այսպէս ընթանալ, պէտք է սպասել, որ շատ
կարճ ժամանակից յետոյ ընդհանուր հրեղէն կը
բռնկի անյոթը:

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԻ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

Ես մի գրական մրցանակ եմ նշանակում:
Մրցանակը հազար ռուբլի է:
Հազար ռուբլին անհատական թիւ չէ գրական
մրցանակին համար, բայց մասնաւոր այժմ,
զրաժանակ ճգնաժամների միջոցին, նա մի չը
վաճած առատաձեւութիւն պէտք է համարվի:
Ինչ եւս ասում է Հազար ռուբլու համար Բա-
ղուի անցնալ տարվա հարուստները, որոնք
հարկի հազարները բանի տեղ չէին դնում,
այժմ պատրաստ են ժամերով ձեր ետեւից ման
գալ:

—Ինչ հազար, շատ անգամ մի հարկը բոլոր-
ին ժամերով են օրհնում, կասէ ինձ Բաղուի
ընկերացի:

Շատ լաւ: Ուրեմն իմ նշանակած մրցանակը
գրաւել է եւ բաւարար:

Առաջ գնանք:

Մրցանակ ստանալու համար աշխատանքը
պատրաստ պէտք է լինի մինչեւ առաջիկայ
1902 թվ. փետրվարի 1-ը, իսկ կը յայտարարվի
փետրվարի 21-ին:

Գրական աշխատանքի անունը պէտք է լինի
«Գոգոլ» եւ հայեր, կամ «Գոգոլ» եւ Կովկաս:

Դուք հիասթափված էք:

—Որտեղից որտեղ, բացառապէս էք դու չ,
ինչ կապ Գոգոլի եւ հայերի մէջ: Գոգոլը գրում
էր այն ժամանակ, երբ հայերը նոր էին մտել
ուսուցող հայապատկան տակ եւ ոչ գիտե-
ղուցէ Գոգոլ չէր էլ տեսել ոչ մի հայի, կամ
եթէ տեսել էր, շատ քիչ էր նրանց ճանաչում:
Գոգոլ, գոգոլ...

Բայց փոքր ինչ լսեցէք, յետոյ իմ մրցանակի
վրա լուրջ ուշադրութիւն դարձրէք:

Առաջիկայ փետրվարի 21-ին լրանում է Գո-
գոլի մահվան յիսնամեակը: Այդ առիթով այժմ
գրվում են յօդուածներ նշանաւոր առաջ գրողի
մասին, հրատարակվում են հետաքրքրական
յիշողութիւններ, լոյս են ընծայվում նրա հե-
ղինակութիւնները էժան գնով...

—Շատ լաւ, կորած էք դուք իմ խօսքը,
մենք էլ կարող ենք յարգել Գոգոլին, բայց
ինչ կապ Գոգոլի եւ մասնաւորապէս հայերի
կամ Կովկասի մէջ:

Փոքր ինչ համբերութիւն:

Կարգաւոր լրագիրներում Գոգոլի համար
կազմվող նախապատրաստական ժողովների եւ
երկրորդների մասին, եւ էլ ինձ հարցեր տա-
ն: Արդեօք չէ հնացել Գոգոլը, արդեօք նրա
տիպերը միջնադարեան աւանդութեան շարքը
չեն անցել:

Արդեօք այժմ էլ կան «ձեռք» հոգիներ,
իլիստակովներ, Գոգոլեաններ եւ այլն:

Արդեօք հայի կամ Կովկասի կեանքը որ եւ
է գործ ունեցիլ է Գոգոլի տիպերի հետ:

Իմ հարցերի պատասխանը եղաւ սարա-
փեցուցիչ:
Ինչ հիմնական երեւոյթ մեր կեանքից, ինչ
հիմնականութիւն վերջնում էի, ամեն տեղ իմ
աչելի առաջ մեծ թուով հանդէս էին գալիս
Գոգոլի տիպեր:

Ան եւ վճեցի մի մրցանակ նշանակել, որ

մեր կտանք տեղեկան անձինք զբաղվեն նրա-
նով, ստանալով իրանց աշխատանքի համար
վայելուչ վարձատրութիւն:

Այժմ կարծեմ հասկանալի է:

Ուղեւ զի մրցանակի համար աշխատողը
լաւ իմանալ, թէ ինչ է իմ ցանկացածը, եւ կը
տա՞մ մի երկու նմուշ:

Օրինակ, վերցնենք մի գաւառական քաղաք,
դիցուք Գորին:

Այդտեղ մի քանի տարի է, որ քննութիւն-
ներ են կատարվում մի քանիսի գործերի
վրա, որի ձեռքին է եղել երեցփոխութիւնը
երեք տարի շարունակ:

Յանկարծ որտեղից որտեղ՝ կասկած է
լայնվում, թէ հայերն են մաքուր չին, թէ ե-
կեղեցական գումարները ուրիշ գանձարանում
են պահվում:

Փորոք հոգեւոր կառավարութիւնը քննու-
թեան հարց է հանդէս բերում:

Քննութիւն:

Թիֆլիսից քննիչ է ուղարկվում 1900 թվ.ին
Ջաքար քահանայ Ջորգեղեան:

Հազիւ օկուած է նա իր քննութիւնը՝ յան-
կարծ հետաքրքր...

Հետաքրքիր թիֆլիսից:

Հետաքրքիր յետ է կանչում քննիչին:

Կրտսե թողած իր գործը, քննիչը վերադառ-
նում է:

Ո՞վ է տուել այդ հետաքրքիր:

Մեծամասնութեանը մինչեւ այժմ յայտնի չէ,
թէ ով:

—Ինչպէս թէ յայտնի չէ, կը հարցնէք դուք:

Դրանական թղթերում չէ նշանակված թէ
քննիչը պէտք է վերադառնար եւ ինչ պատճա-
ռով:

Քննութիւնը այդպիսով յետաձգվեց:

Նոյն փորում մի վեց տարի առաջ ծխական-
ների մի ժողով, ցանկանալով քահանայ ձեռ-
նադրել լեղացի մի աւերացի, խնդրեց է ու-
ղարկել Կոնստանտնուպոլիս հին քահանայի դէմ:

Խնդրեցի քաղաքագրած 42 անձերից 14-ը
կեղծ են, նրանցից 8 մեռած, 5-ը անյայտ, 1
աքաղաք, 1-ը ուրիշ ծիփից:

Փորեցիները ցանկացել են Գոգոլի «Մեռած
հոգիները» (Мёртвые души) մեզ ինչեցնել եւ
բաւական աղոթել են:

Մի ուրիշ օրինակ:

Մի շաքար օրակից առաջ նոյեմբերի 23, 24
եւ 25-ին, երեք օր շարունակ քննվում էր մի
ընտրել եւ շատ հետաքրքրական դատաւո-
նական գործ:

Թիֆլիսի դատաւոնական պալատը Երեւա-
նում գաղված էր այդ երեք օրը Սամսոն
Տէր-Փողոսեանի եւ Վանդերթի գործով:

Լրագիրները տպեցին տեղեկութիւններ եւ
մենք վերցնում ենք դրանց, առանց մեր
կողմից մի բան աւելացնելու:

Ո՞վ է Սամսոնը:

Դա այն Սամսոնն է, որ առաւ-Թիւրքական
պատերազմի ժամանակ, երբ Բայազէտի բեր-
դում գտնվող առաջ դրքը պաշարված էր
Թիւրքական զորքերով, դուրս եկաւ եւ բազ-
մաթիւ խոշորութեան հանդիպելուց յետոյ,
գնաց հասաւ գնեցաւ Տէր-Պապասովին եւ
յայտնեց Բայազէտի բերդում գտնվածների
անել եւ ասարափելի դրութեան մասին: Ինչ-
պէս յայտնի է, Տէր-Պապասովը իսկապէս միջոց-
ներ ձեռք առաւ եւ անգամայն Բայազէտի բերդը:

Պատերազմը վերջանալուց յետոյ Սամսոնը
ստացաւ մի քանի պաշտօններ, իսկ յետոյ
գտնվում էր Եւրոպայի-Դարապազեզում տեղա-
կան պահակախմբի զինաւորի պաշտօնով:

Ո՞վ էր Վանդերթը:

Տարուր-Դարապազեզի նախկին գաւառա-
պետը, որի իշխանութեան տակ գտնվում էր
Սամսոն Տէր-Փողոսեանը:

Վանդերթու ամեն ամիս բաժանելով ծառայ-
ողներին ուժինները, ապիւս էր Սամսոնին ոչ
այնքան փողով, որքանի համար նա պահանջում
էր նրանից ստորագրութիւն, այլ աւելի քիչ:
Անուանական կերպով թրվում էր ծառայողնե-
րի մի յայտնի թիւ, իսկ իրապէս պահվում էին
քիչ ծառայողներ: Ռոճիկը վերցնում էր իրա-
կաւոր հաշուով: Սրբ Եւրոպայի վերջապէս
գաւառապետին յայտնեց, որ նա անկարելի է
համարում ստորագրել ստացված այն գումարը,
որ նա չէ ստացել, գաւառապետը նրան հա-
գաւորեց անելով, որ նա անում է այդ բոլորը
նահանգապետի գաղտնիքով:

Այդ բոլորը ուսու դուրս եկաւ:

Նահանգապետը ընկնց բոլորովին անտե-
ղեակ էր:

Վերջապէս...

Վերջապէս, ինչ երկարացնեմ, բանը հասաւ
գաւառապետին Սամսոնը ուրիշ եղ չը գտաւ եւ
գանգատվեց:

Դատաւոնական պալատը պարզեց, որ
Վանդերթը 3,600 ռուբլուց աւելի վերցրել է
սպօրէն կերպով, իրան թող է ւտել մինչեւ
300 կեղծիքներ գործելու եւ կատարել է ու-
րիշ զեղծումներ:

Մինչեւ 80 վիշտ հաստատեցին կեղծիքները
եւ զեղծումները:

Սամսոնը արդարաւայաւ, իսկ Վանդերթու գա-
տապարովեց երեք տարվա բանտարկութեան:

Արդեօք Գոգոլի լեզուած հոգիները չեն կեն-
դանալ ձեր առաջ: Արդեօք չեղած ծառայ-
ողների ուժինները չեն ինչեցնում այն գրողի
անմահացած տիպերի մասին, որի մահից
անցել է ամբողջ կէս դար:

Ինձ կարող են ասել, որ դա բացառու-
թիւն է:
Նրանի թէ այդպէս լինէր:

Բայց, օրինակ, իլիստակովներ կան մեր
կեանքում:

Նայեցէ՛ք ձեր շուրջը:

Ամեն տեղ նրանք կան եւ մեծ քանակու-
թեամբ:

Ամենք զգալիներից ու մայրաքաղաքնե-
րից են խոսում այնպիսի ոճով ու լատերով,
որ Գոգոլի իլիստակովը նրանց առաջ բոլորո-
վին կը նմանանար:

Ես այլ եւս չեմ խօսում մեր արտասահմա-
նեան «աստուածաբանների» եւ «Sciences so-
ciales»-ի անունից խօսողների մասին:

Դրանք ինչ ուղում են ասում են: Մեր
խեղճ հասարակութիւնն էլ ասիւպած էր լսել
եւ հաւատալ: Եւ նա կը շարունակէր այդ մո-
լորութեան մէջ մնալ, եթէ իլիստակովները չը
մերկանային շուտով եւ չը ներկայանային նրա
առաջ իրանց էութեամբ:

Ես չեմ ուղում ինքս անուանել նրանց եւ
թուել նրանց գործերը:

Դրանցով կը զբաղվի մրցանակի համար աշ-
խատողը:

Ես իրեւն օրինակ առաջ բերի վարագործի
յետեւը գտնվող բազմաթիւ եւ բազմապատկա-
կեանքի փոքրիկ խորից մի երկու նմուշ:

Նրանցից հատորներ կարելի է կազմել:

Ես կը սպասեմ ենթագրեալ աշխատութեան:

Մրցանակի գումարը պատրաստ է եւ կը տըր-
վի, երբ աշխատութիւնը լրակատար կերպով
ներկայացված կը լինի:

Այդ աշխատութիւնը կարող է լինել եւ
պատկերազարդ:

Գրեթէ սպառնալից են կատարելու պա-
տուիրները ձախքը նոյնպէս վերցնում եւս ես
ինձ վրա:

Շատ աղող պայմաններ են, այնպէս չէ:
Վրձին

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

30 նոյեմբեր

ՊԵՆՁԱ, նոյեմբերի 30-ին բացվեց նահան-
գական զեմովի ժողովը:

Электронпечатня Груз. Издат. Т—ва. В.-Ваниская ул.